ՆՈՒՀի մանկավարժական աշխատողների վերապատրաստմում

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Երաժշտության ունկնդրումը՝ որպես երեխայի երաժշտագեղագիտական ճաշակի զարգացման միջոց»

Կազմող՝ Աննա Գևորգյան

<<Երևանի h7 մսուր-մանկապարտեզ>> ՀՈԱԿ

Ղեկավար՝ մ.գ.թ., դոցենտ Անահիտ Գևորգյան

Վերապատրաստող կազմակերպություն՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3
ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՆԿՆԴՐՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԵՐԵԽԱՅԻ ԵՐԱԺՇՏԱԳՂԱԳԻՏԱԿԱՆ ՃԱՇԱԿԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ……5

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……14

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……15

Ներածություն

Երաժշտությունը կարևոր նշանակություն ունի երեխաների գեղագիտական և հոգեկան դաստիարակության գործում: Այն նպաստում է երեխաների հուզական ոլորտի, ազնիվ, վեհ զգացմունքների ձևավորմանը: Երաժշտությունը զարգացնում է ճանաչողական հետաքրքրությունը, գեղագիտական ճաշակը, ստեղծագործական երևակայությունը:

Հայ մեծ բանաստեղծ Հ. Թումանյանը, խոսելով երաժշտության դաստիարակչական նշանակության մասին, գրել է. «Երաժշտությունն արվեստների մեջ էն կախարդ ուժն է, որ անմարմին արտահայտություններով կարողանում է անմիջականորեն և միանգամից տիրել մարդու բովանդակ գոյությունը, նրա մարմնին ու հոգուն և տիրաբար տանել ուր որ կամենա» [1]:

Երեխաներին մատչելի և հասկանալի ձևով երաժշտություն մատուցելը պատասխանատու շնորհակալ գործ է: Նախ, երաժշտական դաստիարակության գործընթացը պետք է ղեկավարի այն մանկավարժը, որը մասնագիտորեն պատրաստված է, ստեղծագործող է, սիրում է երեխաներին: Երաժշտական ղեկավարը կոչված է մտերմացնել երեխաներին երաժշտությանը՝ ներգործելով նրանց վրա արտահայտիչ կատարումով այնպես, որ առաջացնի հուզական ապրումներ, բարերար ազդեցություն ունենա երեխայի հոգեկան աշխարհի վրա:

Մանկապարտեզում երեխաների երաժշտական դաստիարակությունը հիմնականում իրականացվում է պարապմունքների ժամանակ, որի մեջ ընդգրկվում են երաժշտական գործունեության հետևյալ ձևերը.

- երաժշտության ունկնդրում,
- երգեցողություն,
- երաժշտառիթմական շարժումներ,
- նվագ մանկական նվագարաններով,
- հանպատրաստից ստեղծագործել:

Երաժշտագեղագիտական դաստիարակության խնդիրների լուծման նկատմամբ համընդհանուր մոտեցումը հնարավորություն է տալիս հաջողությամբ

իրագործելու երեխայի անձի ձևավորումը:

Ազգային երաժշտության ունկնդրումը մեծ հնարավորություն է տալիս երեխաների գեղագիտական ճաշակի ձևավորման համար՝ սերմանելով նաև ազգային արժեքներ ու գեղարվեստական կարողություններ և հմտություններ:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել երեխաների երաժշտագեղագիտական դաստիարակությա իրականացումը երաժշտության ունկնդրումը որպես երեխայի ճաշակի զարգացման միջոց:

Երաժշտության ունկնդրումը՝ որպես երեխայի երաժշտագեղագիտական ճաշակի զարգացման միջոց

«Զգուշությամբ և երկյուղածությամբ մոտեցեք դաստիարակության գործին, խիստ փափուկ պաշտոն մըն է ձերը: Սխալ ուղղությամբ՝ ազգ մը կխորտակեք վերջը»: Կոմիտաս



Վարդգես Սուրենյանց. <<Կոմիտաս>>

Երաժշտության միջոցով մենք ծանոթանում ենք մեր նախնիների հոգևոր կյանքին և սերունդներին փոխանցում ազգային ոգին և հոգևոր արժեքները: Որպեսզի այսօր իրականություն դառնա մեր ազգի զարթոնքը, շատ կարևոր է առաջնային տեղ տալ երաժշտագեղագիտական դաստիարակությանը՝ որովհետև «Ոչ մի այլ միջոց չի կարող ավելի լավ և ավելի արդունավետ խրախուսել կրթությունը և լուսավորությունը, քան գեղեցիկ արվեստները՝ պոեզիան, երաժշտությունը և գեղանկարչությունը», - գրում է Խաչատուր Աբովյանը [2]:

Երեխաների դաստիարակության համակարգում կարևոր տեղ ունի

երաժշտագեղագիտական դաստիարակությունը, որը հատուկ կազմակերպված մանկավարժական գործընթաց է՝ ուղղված երեխայի գեղագիտական զգացումների, կյանքում և արվեստում գեղեցիկի վերաբերյալ պատկերացումների ձևավորմանը, շրջապատող իրականության հանդեպ, գեղագիտական վերաբերմունքի, ձևավորմանը:

Գեղագիտական դաստիարակության խնդիրներն ուղղված են երեխաների՝ գեղեցիկը նկատելու, ճանաչելու, գնահատելու կարողությունների ձևավորմանը, ինչպես նաև հուզականորեն համարժեք արձագանքելու ունակությունների զարգացմանը, գեղագիտական ճաշակի դաստիարակմանը: Դ. Բ. Կաբալևսկին նկատել և ասել է. «Երաժշտական մշակույթի հետագա զարգացման փորձը առանց նախնական լավ աշխատանքի և երեխաների երաժշտական դաստիարակության, հավասարազոր է նրան, որ հսկա շենք կառուցեն առանց հիմքի» [10]: Հետևաբար նախադպրոցական տարիքի երեխայի երաժշտական դաստիարակությունն ապահովելու համար, նախ և առաջ, պետք է մտածել երաժշտության ունկնդրման միջոցով երաժշտական ընկալման ձևավորման ու զարգացման մասին: Երաժշտության պարապմունքի նպատակն է դաստիարակել հոգևոր և բարոյագեղագիտական բարձր արժեքներով օժտված մարդ, երաժշտության գիտակից և ակտիվ ունկնդիր, որը կարող է արժևորել իր ազգային և համամարդկային երաժշտական մշակույթը: Նախադպրոցական տարիքում երեխայի գեղագիտական դաստիարակության հիմնական նպատակը երեխաների գեղագիտական գիտակցության և ճաշակի ձևավորումն է, որը խթանվում է երաժշտության միջոցով: Երաժշտությունը ձևավորում է վառ անհատական կերպարներ, վառ գույներ առաջացնում խոր հույզեր՝ շարժելով կատարողի և ունկնդրողի միտքը:

Անհրաժեշտ է դեռ վաղ հասակից, երեխաների մեջ առաջացնել, սեր դեպի երաժշտությունը, դեպի արվեստը: Երաժշտության պարապմունքի գործունեության ձևերը՝ երաժշտության ունկնդրումը, երգեցողությունը, պարը, ռիթմիկ և երաժշտա-ռիթմիկ վաժությունները, երաժշտական խաղերը, նվագակցությունը հարվածային նվագարաններով օգնում են սաներին ծանոթանալ երաժշտական

արվեստին: Նախադպրոցական տարիքի երեխաների մոտ երաժշտության ունկնդրումը ամենակարևոր միջոցներից է, քանի որ փոքր հասակից սովորում են ունկնդրել, երգել:

«Մանկապարտեզի երեխաների դաստիարակության ծրագրում» հատուկ տեղ է հատկացված երաժշտության ունկնդրմանը: Երաժշտության ունկնդրումը նպաստում է երեխաների երաժշտական զգայունակության, ընկալման զարգացմանը, ընդլայնում երեխայի մտահորիզոնը, դաստիարակում երաժշտական մշակութային տարրեր: Երաժշտության հաճախակի ունկնդրումը օգնում է երեխային ավելի մեծ տարիքում լավ հասկանալ, ճիշտ ընկալել ու սիրել երաժշտությունը: Մեծ ժամանակների մեծանուն կոմպոզիտոր Ա. Խաչատրյանը մի առիթով ասել է. «Սխալ է այն տեսակետը, թե 4-6 տարեկան երեխաներին պետք է մատուցել հատուկ երաժշտություն, ավելի պարզ, տարրական, գրված միայն նրանց համար, ուրիշ՝ «մեծահասակների երաժշտությունը» իբրև մատչելի չէ նույնիսկ «վնասակար» է նրանց համար: Ես այդ կարծիքին դեմ եմ: Չի կարելի երեխաներին արհեստականորեն անջրպետել դասական երաժշտությունից միայն այն հիմնավորումով, թե գրված է մեծահասակների համար: Երեխան կարող է և պետք է լսի Չայկովսկու, Բորոդինի, Ռիմսկի-Կորսակովի, Բեթհովենի, Մոցարտի, Շտրաուսի ստեղծագործությունները, հարկավոր է, որ նրա լսողությունն ընտելանա իսկական, լավ երաժշտությանը, դաստիարակվի դասական օրինակներով» [4]:

Չկա մի երեխա, որ իր դեռևս փոքրիկ կյանքում երգած կամ պարած չլինի, եթե նույնիսկ մանկապարտեզ չի հաճախել: Երեխաների մեծ մասի երգացանկում ավելի շատ են կենցաղային կամ մեծերից լսած և սովորած երգերը, որովհետև ընտանիքներում մանկական երգեր այդքան էլ չեն երգում: Երգելու ժամանակ երեխաները հանպատրաստից կատարում են երգի բնույթին և բովանդակությանը համապատասխան շարժումներ, որոնք նույնպես մեծերից ընդօրինակած պարային շարժումներ են: Իսկ երեխաների մի մասն էլ չի երգում և, չի էլ պարում: Այստեղ երաժշտության ուսուցչի նպատակն է հետաքրքրություն առաջացնել տարբեր ընդունակություններ ունեցող երեխաների մեջ երաժշտության՝ երգի, պարի հանդեպ, զարգացնել նրանց երաժշտական, լսողական, կարողությունները,

ընդունակությունները, ռիթմական զգացողությունը, երգչային ձայնը, հղկել պարային շարժումները, ձևավորել երաժշտության ներգործության զգայունակությունը, շարժումները երաժշտությանը համապատասխանեցնելու կարողությունը: Երեխայի երաժշտագեղագիտական դաստիարակությունը մանկապարտեզում սկսում ենք այսպես, որը կազմում է ընդհանուր դաստիարակության մի բաղադրամասը: Երաժշտությունը արվեստի այն առանձնահատուկ տեսակն է, որում ամփոփված են մարդկության իմացական, հուզական, գեղագիտական լիցքերը, մեղեդու ռիթմի ու ներդաշնակության մեջ խտացած է ժողովրդի հոգևոր մշակույթի ողջ գույնզգուն երանգապնակը: Երաժշտությունը կարողանում է հուզել մարդուն, նրա հոգում առաջացնելով ամենատարբեր հույզերի ու զգացմունքների անսահման բազմազանություն: Երաժշտական կերպարն ամբողջովին հիմնված է մարդկային զգացմունքների ու ապրումների վրա: Սովորողների երաժշտական մշակույթի զարգացման խնդիրն այսօր տարրական դպրոցի կրթադաստիարակչական գործընթացում առաջնային նշանակություն է ձեռք բերում: Սովորողի գեղագիտական դաստիարակության շրջանակներում երաժշտական մշակույթի զարգացման խնդիրը դիտարկել են մանկավարժներ Կ.Դ. ՈՒշինսկին, Ա.Ս. Մակարենկոն, Վ.Ա. Սուխոմլինսկին, Բ.Տ. Լիխաչյովը, Ղ. Աղայանը, Հ. Հինդլյանը:

Երաժշտության ունկնդրման խնդիրներն են՝

- երեխաներին ծանոթացնել ընկալունակությանը մատչելի, ժամանակակից, դասական և ժողովրդական երաժշտական ստեղծագործություններին
- զարգացնել երեխաների երաժշտական ընկալունակությունը՝ կարողանալ հուզականորեն արձագանքել երաժշտությանը
- նախնական տեղեկություններ տալ հատկապես հայկական ժողովրդական երաժշտության մասին. հիշել ստեղծագործությունները, տարբերել նրանց բնույթը, բովանդակությունը, արտահայտչական միջոցները, ձևավորել գնահատողական վերաբերմունք:

Երաժշտության ունկնդրման նպատակն է երեխաների մեջ սեր առաջացնել դեպի երաժշտությունը, զարգացնել նրանց երաժշտական ճաշակը, սովորեցնել նրանց լսելու կատարվող երաժշտական ստեղծագործությունը: ՈՒնկնդրման նյութերն

ըստ տարիքային խմբերի բարդանում են: Ավագ խմբում մեծ տեղ է հատկացվում նվագարանային ստեղծագործություններին, որի ընկալումը համեմատաբար բարդ է, քանի որ երեխաներից պահանջվում է լսողական փորձ: Այս խմբերում երեխաները պետք է ծանոթանան տարբեր բնույթի և ժանրի ստեղծագործությունների՝ երգային, նվագարանային, խմբերգային, սիմֆոնիկ, ինչպես նաև օպերաներից, բալետներից հատվածների, օրինակ Ա. Խաչատրյանի, «Վարդագույն աղջիկների պարը» «Գայանե» բալետից. Ալ. Սպենդիարյանի «Պարսկական քայլերգը» «Ալմաստ» օպերայից, Պ. Չայկովսկու «Նեապոլիտանական պարը» «Մանկական ալբոմ»-ից և այլն:

Երաժշտության ընկալումը կապված է իմացական գործընթացների՝ ուշադրության, երևակայության, հիշողության հետ, ուստի ունկնդրումը կատարվում է պարապմունքի առաջին մասում՝ երաժշտաշարժողական վարժություններից հետո, երբ երեխաները դեռևս հոգնած չեն և ուշադրությունը կայուն է:

Երաժշտության ընկալմանը, նրա բովանդակության բացահայտմանը լավ են օգնում բանաստեղծությունները, որոնք ունեն իրենց ռիթմը, մեղեդին և ավելի մոտ են երաժշտությանը, քան արձակը:

Երաժշտական ստեղծագործության պատկերավոր ընկալմանը շատ են օգնում բնության գրկում կազմակերպված զբոսանքները, որոնց ժամանակ երեխաների ուշադրությունը հրավիրում է այն երևույթների վրա:

Երաժշտության ունկնդրման ավարտից հետո պետք է պատմել ունկնդրումից ստացած իրենց տպավորումների մասին, ինչպիսի՞ն է ստեղծագործության բնույթը (ուրախ, թախծոտ, տխուր, տեմպը արագ, հանդարտ, դանդաղ) ո՞վ է կատարում այն՝ մենակատա՞րը, թե՞ երգչախումբը, նվագարա՞նը, թե նվագախումբը և այլն: Այդ տարիքի երեխաները դժվարանում են բառերով ճիշտ ձևակերպել երաժշտությունից ստացած իրենց տպավորություններն ու զգացողությունները, դրա համար պետք է երեխաներին օգնել նրանց մտածողությունը խթանող հետևյալ հարցերով.

ա. Ի՞նչ տպավորություն ստացար:

բ. Ի՞նչ ես ուզում անել այդ երաժշտության ուղեկցությամբ՝ երգել, պարել, քայլել

գ. Ի՞նչ նվագարան էր հնչում:

դ. Ի՞նչ գույներով կներկայացնես այդ երաժշտությունը:

ՈՒնկնդրման գործընթացն իրականացվում է հետևյալ հերթականությամբ.

ա. երաժշտության դաստիարակի մեկնաբանող խոսք,

բ. երաժշտական ստեղծագործության գեղարվեստական կատարում,

գ. դիդակտիկ նյութերի ցուցադրում,

դ. երաժշտության բնութագրում:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում ունկնդրման գործընթացը առանցքային դեր է խաղում երեխաների զարգացման գործում: Այս գործընթացն ուղղված է լսողական ընկալման զարգացմանն ու բարելավմանը, որը խոսքի հմտությունների հաջող յուրացման հիմքն է:

Նախադպրոցական կրթության սկզբնական փուլում երեխաները ակտիվորեն շփվում են իրենց շուրջը գտնվող տարբեր հնչյունների հետ: Բնության, երաժշտության և առօրյա կյանքի տարբեր հնչյունների ազդեցությունը նպաստում է նրանց ունկնդրման վերլուծության զարգացմանը: Երեխաները սովորում են ճանաչել և տարբերել հնչյունները, ինչը հաջող ունկնդրելու նախապայման է:

Նախադպրոցական կրթության մեջ ունկնդրման խաղային մոտեցումն արդյունավետ միջոց է: Լսողական ընկալման զարգացմանն ուղղված խաղերի բազմազանությունը թույլ է տալիս երեխաներին սովորել զվարճալի և հանգիստ ձևով: Օրինակ՝ խաղերը, որոնցում երեխաները պետք է ճանաչեն ձայնի աղբյուրը կամ կրկնեն հնչյունների հաջորդականությունը, օգնում են զարգացնել նրանց ուշադրությունն ու հիշողությունը:

Երաժշտությունը նույնպես կարևոր դեր է խաղում ունկնդրման գործընթացում: Ձայնային ռիթմերի և մեղեդիների ներմուծումն աշխարհ նպաստում է երեխաների երաժշտական ունկնդրման ձևավորմանը: Երգը, երաժշտական գործիքներ նվագելը և պարը ոչ միայն հաճույք են պատճառում, այլև նպաստում են ունկնդրման հիշողության և շարժողական համակարգման զարգացմանը:

Երաժշտության ունկնդրման գործընթացի կարևոր բաղադրիչն է խոսքի հետ փոխազդեցությունը: Երեխաները սովորում են լսել և հասկանալ ուրիշների խոսքը՝

զարգացնելով լսողական հմտությունները և ընդլայնելով իրենց բառապաշարը: Լեզվական հմտությունների ձևավորմանը նպաստում են պատմությունները, աուդիո հեքիաթները և ընթերցանության նյութերի քննարկումները:

Երեխաների սիրած գործունեության տեսակներից է խաղը, երաժշտական շարժախաղերը, որոնք կարևոր դեր են կատարում երեխաների շարժումային գործունեության գործում: Շարժախաղերը հնարավորություն են տալիս երեխաներին ցուցադրելու ստեղծագործական երևակայություն: Շատ լավ է ցուցադրել երգի բովանդակությունը պատկերող գեղարվեստական պլակատ: Երեխաներին կարելի է հանձնարարել մատիտով կամ ներկերով նկարել երգի բովանդակությունը: Եթե երգի մեջ կան երկխոսություններ, ապա երգը սովորելուց հետո դերերը բաժանել և խաղի միջոցով ավելի աշխուժացնել երգը, օրինակ՝ «Ճպուռն ու Մրջյունը» մանկական երաժշտական բեմականացում (խոսք՝ Աթաբեկ Խնկոյանի, երաժշտություն՝ Լիլիա Զալինյանի):

Երաժշտության ունկնդրման պարապմունքն իրականացվեց «Երևանի h7 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի Ավագ խմբում:

«Ճպուռն ու Մրջյունը» բեմականացումը մատուցվում է դաշնամուրի նվագակցությամբ, ապա երեխաներն ունկնդրում են երաժշտության դաստիարակի և դաստիարակի կատարմամբ՝ ծանոթանալով «երաժշտական բեմականացում» հասկացությանը:(Բեմականացման տևողությունը 3րոպե): Երեխաները «Ճպուռն ու Մրջյունը» ունկնդրումից հետո ընդգծեցին երաժշտության բնույթը՝ տեմպը, դինամիկ նշանները: Ձևավորվեցին երաժշտական արտահայտչամիջոցները տարբերելու կարողությունները:

Այնուհետև «Թռի վռի մի ճպուռ» հատվածի ներքո կատարեցին ռիթմական վարժություն: Ստորև ներկայացնում ենք վարժության շարժումները և նոտաները: Թեև վարժության երաժշտությունը սկսվում է 14-րդ տակտից, սակայն աշխաբանքում մենք նշել ենք 1-8-րդ տակտեր, որպեսզի երաժշտական նախադասությունն ամբողջական լինի (2 ֆրազ՝ 4-ական տակտ, 1 նախադասություն՝ 8 տակտ):

Նախապատրաստական դիրք՝ ձեռքերը գոտկատեղին դրած, ոտքերը՝ միասին

1-ին տակտ՝ ծնկածալում

2-րդ տակտ՝ ծնկածալում

3-րդ տակտ՝ 1-ին զարկ՝ մարմինը տանել դեպի աջ, 2-րդ զարկ՝ մարմինն ուղղել

4-րդ տակտ՝ 1-ին զարկ՝ մարմինը տանել դեպի ձախ, 2-րդ զարկ՝ մարմինն ուղղել

5-րդ տակտ՝ ծնկածալում

6-րդ տակտ՝ ծնկածալում

7-8-րդ տակտեր՝ 1 պտույտ ոտնաթաթերի վրա

9-16-րդ տակտեր՝ կրկնել 1-8-րդ տակտերը:

ՈՒնկնդրելով հատվածներ երաժշտական բեմականացումից, երեխաները ծանոթացան երաժշտական բեմականացման տեսակին և նրա առանձնահատկություններին: Հետազոտությունը ցույց տվեց, որ այդ ուսումնական

պարապմունքն արդյունավետ էր և ուսանելի: Այնուհետև երաժշտական բեմականացման ունկնդրումը նպաստեց երաժշտագեղագիտական ճաշակի ձևավորմանը և զարգացմանը:



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երաժշտության ունկնդրումը՝ որպես երեխայի երաժշտագեղագիտական զարգացման միջոցի վերաբերյալ հետազոտական աշխատանքի ավարտին կարելի է ընդգծել, որ երաժշտությունը կարևոր բաղադրիչ է երեխաների գեղագիտական ընկալման, հուզական ոլորտի և ճանաչողական կարողությունների ձևավորման գործում: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս երաժշտության դրական ազդեցությունը երեխաների ուշադրության, հիշողության, արհեստական ճաշակի և ստեղծագործ մտածողության զարգացման վրա:

Հարկ է նաև նշել, որ երաժշտական ժանրերի և ոճերի բազմազանությունն օգնում է ընդլայնել երեխայի երաժշտական փորձը՝ նպաստելով նրա մշակութային կրթությանը: Կարևորել ծնողների և դաստիարակների ներգրավման կարևորությունը երեխաների համար դրական երաժշտական միջավայր ստեղծելու գործում, ինչպես նաև ընդգծել արդյունավետ կրթական ծրագրերի մշակման և իրականացման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր երեխայի անհատական առանձնահատկությունները:

Եզրափակելով կարելի է ընդգծել, որ նախադպրոցական ուսումնական հաստատությունում ունկնդրման գործընթացը ներկայացնում է բազմաթիվ փոխկապակցված գործողություններ, որոնք ուղղված են երեխաների լսողական ընկալման բազմազան զարգացմանը: Խաղեր, երաժշտություն, խոսքի հետ փոխազդեցություն – այս ամենը հիմք է ստեղծում հաջող ուսուցման համար և զարգացնում այնպիսի հմտություններ, որոնք անհրաժեշտ են հետագա կրթության և կյանքի համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գևորգյան Ա. «Ռիթմիկա» մեթոդական ձեռնարկ /1ին,2-րդ մասեր/ Երևան, Մեկնարկ, 2022թ.

2. Դիվան Խաչատուր Աբովյանի, «ԱՐՄՖԱՆ» հրատ. Երևան, 1940թ.

3. «Թումանյանը արվեստի մասին» ԳԱ հրատարակչություն, Երևան, 1996, էջ 126

4. Լուսինյան Ա. Ղազարյան Կ. «Երաժշտությունը մանկապարտեզում», Երևան 2009թ.

5. ՀՀ Կառավարություն «Նախադպրոցական Կրթության Պետական Կրթական Չափորոշիչ» 2021թ.

6. Մկրտչյան Շ.Շ. Եր.: «Երաժշտությունը մանկապարտեզում», Լույս,1990:

7. Նախադպրոցական կրթական համալիր ծրագրեր /0-1, 1-2, 2-3, 3-4, 4-5, 5-6/:

8. Ветлугина Н.А., Кенаман А.В. Теория и методика музикалъного воспитания в детском саду: Учоб.пособие для студентов пед.ин-тов по спец. «Дошкол педагогика и психология».-М.: Просвещение, 1983.-255с.

9. Гогоберидзе А.Г.,Деркунтская В.А. Музикяалъное воспитание детей раннего и дошкольного возраста: Современные педагогические технологии.- Ростов на Д: Феникс, 2008-430с.

10. Кабалевский Д.Б. Прекрасное пробуждает доброе. эстетическое воспитание, - М.: 1973, цт.15.